ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 2

№ ԳՀԱՊՁԲ-20-7/54-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 16-ը հունիսի 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Սահակյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Քանաքեռի Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ս. Ազատյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 10.09.2020թ. կնքված № ԳՀԱՊՁԲ-20-7/54-2 գնման պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր), ՀՀ կառավարության 2020թ. դեկտեմբերի 25-ի N 2186-Ա որոշումը և այդ որոշման հիման վրա 01.02.2021թ. կնքված թիվ 1 համաձայնագիրը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Գնորդը (Ստացողը) պարտավորվում է Վաճառողի կողմից հանձնված ապրանքների (այսուհետև՝ Ապրանք) դիմաց կատարել վճարում:

2. **Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 17,599,560 (տասնյոթ միլիոն հինգ հարյուր իննսունինը հազար հինգ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

2.2 Գնորդը իրեն հանձնված ապրանքների դիմաց վճարումը կկատարի համապատասխան սույն Համաձայնագրի № 1 Հավելվածով սահմանված ժամկետում և կարգով:

3. **Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը: Համաձայնագրի (պայմանագրի) պայմանները կիրառվում են թիվ 1 համաձայնագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա սույն Համաձայնագիրը կնքելը և թ. մարտի 30-ից հետո կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում թիվ 1 համաձայնագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա Համաձայնագիր կնքելը Վաճառողի կողմից մատակարարված ապրանքների դիմաց վճարումն իրականացվում է այդ համաձայնագրերը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1 Հավելվածը բաղկացած է 1 թերթից, հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ք. Երևան, Զ. Սարկավագի 157
ՀՀ ֆինանսների նախարարության	«Արարատբանկբանկ» ԲԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 1510023294810100
Հ/Հ 900011144079	ՀՎՀՀ 00803554
ՀՎՀՀ 02522157	Տնօրեն՝
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ	Ս. ԱԶԱՏՅԱՆ

Հավելված N 1

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2021թ. պետական բյուջեից ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ. ընդ որում՝		
			2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	Կիսավերարկու / վերարկու կիսաբրդյա ՊՊԿ/	18211100/6	17599560	17599560	17599560

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի հետևակայալ

ՎԱՃԱՌՈՂ

« Քանաքեռի Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ
տնօրեն

Ս. ԱՉԱՏՅԱՆ